Հայտարարություն «Արարատ-Արմենիա» մրցանակաբաշխության մասին

Հունգարիայի Հայ Ինքնավարությունը 8/2022. I.27 ժողովում որոշում է կայացրել «Արարատ-Արմենիա» ամենամյա մրցանակաբաշխության կարգը հաստատելու մասին, որով նախատեսվում է պարգևատրել Հունգարիայի հայերի շահերին, հասարակական կյանքին, մշակույթին, արվեստին կամ ազգային ավանդույթների ոլորտին, հայոց լեզվի պահպանմանն ու ազգային ինքնության զարգացմանը նպաստող գործունեությամբ աչքի ընկած անձանց և համայնքներին:

Յուրաքանչուր տարի լավագույն աշխատանքների համար կարող է շնորհվել առավելագույնը երկու մրցանակ (նույնիսկ հետմահու) Հայաստանի Հանրապետության Անկախության տոնի առթիվ կազմակերպված միջոցառման ժամանակ:

Հունգարիայում ապրող յուրաքանչյուր հայ այս տարվա մրցանակաբաշխությանը մասնակցելու համար կարող է ՀՀԻ-ն ներկայացնել իր թեկնածուին մինչև 31.08.2023թ. - ն Բուդապեշտ, Սեմմելվեյս փողոց 17. փոստային հասցեով կամ **armenia@ormenyorszagos.hu** էլ. փոստի հասցեով:

Ստացված առաջարկություններ հիման վրա մրցանակակիրները կընտրվեն Հունգարիայի Հայ Հնքնավարության ընդհանուր ժողովի կողմից: